

# ՉԻՒՑ

ՀՐԱՏԱՐԱԿ. VIII-ԸՊ ՏՄԻ

Բաժանորդագինն է՝ 1913 թ.  
 Ռուսաստանում տարեկ. 4 ռ., կէս տարուան 2 ռ.  
 50 կ., ամսական 50 կ. չնկտեմը  
 12 ֆր., կէս տար. 7 ֆր.:  
 Յայտարարութեան իւրաքանչիւր տողն արժէ՝  
 առաջին երեսուն 20 կ., վերջինում՝ 10 կ.:  
 Կեղծ անունով ստորագրած լողուածի հեղինակը պարտաւոր է խմբագր. լայնակի իր իսկական անունը, Իմրագրութիւնը կարող է կրճատել կամ փոփոխել լողուածը:  
 Տպագրութեան անխորտակ համարում ճանր լողուածը ոչնչացում է, իսկ խոշոր պատում մի ամիս և նոյնպէս ոչնչացում, եթէ հեղինակը լիտ չի պահանջում՝ ճանապարհածախքն ուղարկելով:  
 Իմրագրութիւնը բաց է 10-ից—12-ը բացի կիրակի և տօն օրերից:  
 Իմրագրութեան հասցէն. Редакция армянскаго журнала „Обитъ“, Тифлисъ. Արտասահմանից՝ Rédaction du Journal armenien „Hovit“, Tiflis, Caucase, Russie.  
 ԻՄՔ. ՀՐԱՏԱՐԱԿԻՑԷ՝ Եզգինկ ա. ք. Երզնկեան

ԱԶԳՍՅԻՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԲԱՆԹԵՐԻԹ

Հոյս և տեսնում կիրակի օրերը



ՏԵԼԵՖՅՕՆ № 13—29

ԱՌԱՆՁԻՆ № 10 Կ.

## Բ Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Մեր ուղղագրութեան մասին:
2. Տգեղութեան կատարելութիւնը:
3. «Русские Вѣдомости»-ի տօնը:
4. Վերջին քաղաքական անցքերը մերձաւոր արեւելքում և հայկական խնդրի վերագործնումը:
5. Պարագիտը:
6. Մամուլ:
7. Ուղղագրական անկէտայի տօնիւ:

8. Թիֆլիզի Յօրելեանական Յանձնաժողովները:
9. Համագային Յօրելեանի տօնակարգը:
10. Մատենախօսութիւն:
11. Ճանապարհորդ. թուրքիկ տպաւորութիւններ:
12. Նախագիծ Հայաստանի մէջ մտցուելիք բէֆօրմների:
13. Նամակներ խմբագրութեան:
14. Լուրեր:

### ՄԵՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Հոյս»-ի անցեալ համարում տպուած էր Ս. Լյմիաճնից Յօրելեանական Յանձնաժողովի մեզ ուղարկած հայ լեզուի ուղղագրութեան մասին կազմած անկէտային հարցերը, որ մշակել է պ. Մանուկ Աբեղեան. Այդ առթիւ մենք ստացել ենք զանազան գրութիւններ, որոնցից տպագրելու ենք միքանիսը՝ պատասխանատուութիւնը թողնելով հեղինակների վրայ:

Սակայն պարզելու համար մեր վերաբերմունքը այդ խնդրի հանդէպ, հարկ ենք համարում մեր կողմից միքանի խօսք ասել:

Ուղղագրութեան խնդիրը, նրա բարեփոխութեան կամ նոյնութեամբ պահելու խնդիրը՝ մի զուտ գիտնական, ակադէմիական հարց է: Պէտք է արդեօք և ժամանակն է արդեօք ուղ-

ղագրութեան մէջ մտցնել որոշ փոփոխութիւններ—այդ պէտք է վճռի մի գիտնական հաստատութիւն, լեզուագէտների ընկերութիւն: Սա մի շատ յայտնի ճշմարտութիւն է:

Ուրեմն քանի որ մեր մէջ չկայ գիտնական ոչ մի հաստատութիւն կամ խմբակցութիւն, պէտք է Մայր Աթոռում կամ այլ տեղ գումարել հայագէտների ժողով, նրա քննութեան և ուսումնասիրութեան հարց դարձնել հայ լեզուի խնդիրը և ընդունել նրա որոշումը:

Մեզ համար կասկածից դուրս է, որ հայ ուղղագրութիւնը բարեփոխութեան և կանոնաւորման անհրաժեշտ կարիք ունի: Վերջին ժամանակներս աւանդական ուղղագրութիւնը այնքան խախտուեց ամեն կողմից, որ նրա կանոնաւորման խնդիրը չի կարելի այլևս յետաձգել:

Այս խնդրում մեզ—իրևև ոչ-մասնագիտական-լեզուաբանական մի թերթի—այնքան էլ չի հետաքրքրում այս կամ այն փոփոխութեան՝ Վի կամ Լ-ի խնդիրը առանձնապէս, այդ մասին թող վիճեն մասնագէտները, որոշէ լեզուագէտների ժողովը, ուղղագրութեան մէջ մեզ ամենից առաջ հետաքրքրում է նրա միակերպութեան խնդիրը, որովհետև լեզուն լինելով մի ժողովրդի բոլոր անդամների փոխադարձ յարաբերութեան—ազգային կեանքի միակ և գլխաւոր գործօնը, անհրաժեշտ է, որ այդ լեզուի տպագրական արտայայտութիւնը, գրութեան ձևը հասկանալի լինի, կանոնաւորուի բոլորի համար:

Մայր Աթոռում միտք է յղացել վերջապէս վերջ դնել այս լեզուային-ուղղագրական քաօսին. պէտք է սղոննել այս քայլը: Սակայն գործը հարկաւոր լրջութեամբ առաջ տանելու համար չպէտք է շտապել: Մեր կարծիքն է, որ այժմս—Մեծ Յօդերեանի տօների առթիւ—պէտք է կատարել միայն նախապատրաստական աշխատանքներ. նոյնպիսի նախապատրաստական աշխատանքներ պէտք է կատարուի նաև Կ. Պոլսում, Վեհ. Կաթողիկոսի հրաւերով և Պատրիարքարանի ղեկավարութեամբ. պէտք է դիմել նաև Վենետիկի և Վիեննայի գիտնական միաբանութիւններին, օտարազգի հայագէտներին, որանց մէջ կան համաշխորհային լեզուագէտի հռչակ ունեցողներ, և ապա մի կամ միքանի տարուց յետոյ գումարել էջմիածնում, Թիֆլիզում կամ Կ. Պոլսում—վերջինս աւելի յարմար է հաղորդակցութեան տեսակէտից—հայագէտների մի համաժողով—կօնգրէս, և այսպիսով լուծել ուղղագրութեան խնդիրը: Անպայման պէտք է ամբողջ հայութեան համար մի ուղղագրութիւն ստեղծել, ձուլել տաճկահայ և ռուսահայ գրութեանց ձևերը:

Միայն գիտական մեթոդով առաջ մղուած լուրջ աշխատանքը, անկասկած հեղինակաւոր մարմնից կայացրած որոշումը կարող է բոլորիս համար ընդունելի դառնալ, հակառակ դէպքում ինչը կարող է հարկադրել այս կամ այն թերթին, այս կամ այն հեղինակին հետևել այս կամ այն ուղղագրութեան:

Պատրաստ է արդեօք ներկայ էջմիածինը այսպիսի մի լուրջ ու խոշոր խնդրի ղեկավարու-

թեան—այդ ցոյց կը տայ մեզ ապագան. բայց Ստ. Մալխասեանի և Մանուկ Արեղեանի նման մարդոց մօտիկ աշխատակցութիւնը Մեծ Յօդերեանի առթիւ Մայր Աթոռում կատարուող ուղղագրութեան խորհրդակցութեան՝ մեզ յոյս է ներշնչում, որ գէթ ուղղագրութեան խնդրի համար կատարուող աշխատանքները կը կատարուեն ամբոխային տրամաբանութիւնից ու ժխորից դուրս և միզ համար մի նոր առիթ չի ներկայանայ աւելի ևս խճճելու մեր լեզուն:

**ՏԻԵՂՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ահա միքանի տարի է, ինչ Օրմանեան Սրբազանը հեռացել է հրապարակից:

Քաշուած մի անկիւն, նա ամբողջապէս նուիրուել է գրական-գիտնական գործունէութեան և կարճ ժամանակում մէկը միւսի ետևից հրապարակ է հանում այնպիսի գնահատելի աշխատութիւններ, որ այդ պատկառելի եկեղեցականի եղակի գիտութիւնն ու ընդունակութիւնը միայն կարող էին տալ:

Օրմանեան Սրբազանի փափագն է—այդ նա հրապարակաւ իսկ յայտնել է—որ իր կեանքի վերջին տարիները ամբողջապէս յատկացնել վաղուց արդէն ծրագրած երկերի աւարտման: Այս վերջին միքանի տարիները ցոյց տուին, որ Սրբազանի յայտարարութիւնը դատարկ խօսքեր չէին. Հայոց Եկեղեցի-ից և Համապատում-ից յետոյ արդէն սկսուել է Ազգապատումը:

Պէտք է միայն ցանկալ, որ գիտնական Սրբազանը կարողանայ մինչև վերջ հասցնել իր սկսած գործը և ամբողջապէս իրագործել իր գրական գործունէութեան ծրագիրը:

Օրմանեան Սրբազանը չի խառնում այլևս վարչական և ոչ մի գործի, հրաժարուում է առաջարկուած պաշտօններից:

Կաթողիկոսական պալքար չկայ այլևս...  
 Պատրիարքական ընտրութիւնը վերջացել է...  
 Օրմանեան Սրբազանը ոչ մի պաշտօնի թեկնածու չէ...

Բայց և այնպէս նրա անունը շարունակ զարգարում է մեր որոշ տեսակի մամուլի էջերը: